

## ԱԶԱՏ ԽՕՍԲ

ՏԵՏՐ 4

ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԲԱՐԻՉ

## ԱՆԿՈՒՄԷ ԱՆԿՈՒՄ.

Ա՛լ բան մը պիտի չպակսի Պ. Արշակ Զօպանեանի տխուր փառքին : Ինքզինքը կատարելագործելու վրայ է , ու ի՛նչ յաջողութեամբ :

Չինք գիտեր երբե՛ք տեսնուած է այսպիսի օրինակը մարդու մը որ այսքան հոգեւին աշխատի կործանելու ... Ինքզինքը : Չինքը դէպի վերջնական անդունդները խելայեղօրէն ընդթարչ տանող գինովութենէ մըն է կարծես բռնուած , ո՛ր ալ նոյն իսկ ցաւ չի պատճառեր մեզի, — զգուանքը զոր ատիկա մեզի կ'ազդէ՝ ա՛յնքան միահեծան ըլլալով որ ա՛լ ուրիշ զգացումի տեղ չի թողուր :

Մարդ բարոյական ի՛նչ խաթարման, ի՛նչ զառածանութեան հասած ըլլալու է որ ելլէ հրապարակաւ իր թերթին մէջ իր Բարիզի պաշտօնակիցները մատնանչէ ֆրանսական կառավարութեան իբր ֆրանսական քաղաքականութեան դէմ զրպարտիչներ : Կարդացէք Անահիտի վերջին թիւը որուն մէջ Պ. Զօպանեան՝ սրտագին փոյթեռանդութեամբ մը , ու հազիւ վարագուրուած սպառնալիքի նողկալի կեցուածքով մը , այդ հեճիխփօտի դերը ստանձնած էր « Ժողովուրդին Համար » ին դէմ , որ , պարկեշտօրէն ու անկախօրէն , առաջին վայրկեանէն ազդարարած էր Հայ Ժողովուրդին թէ պէտք չէ խաբուիլ ֆրանքեւթուրք զժողովեան առած կերպարանքէն՝ անկից յուսալով հայկական հարցին լուծումը կամ հայ տառապանքին մեղմացումը : Պ. Արշակ Զօպանեան միայն կրնար քաղաքական դատողութեան այս պարզ հարցէն ոստիկանական ստորին շահատակութեան մը նիւթ հանել :

Նորէն , մարդ բարոյական ի՛նչ խաթարման , ի՛նչ

դառածանութեան հասած ըլլալու է որ իր թերթին մէջ, որ Ռուսիա կը մտնէ, ելլէ հրապարակաւ իբր « վայրագ ուսատեաց» մասնանշէ իր մէկ պաշտօնակիցը, Բանաւորի խմբագիր Պ. Կարապետ Բասմաջեանը, գիտնալով հանդերձ — ու գուցէ ճիշդ ասոր համար — որ Պ. Բասմաջեան հնագիտական չինք գիտեր ի՛նչ հետազոտութիւններու համար կը պատրաստուի Ռուսիա ճամբորդել եւ հրաւէր մը ուղղած է Կովկասի Հայոց նիւթական օժանդակութեանը՝ այդ ուսումնական ձեռնարկին ծախքերը ընձեռելու համար իրեն :

Պ. Արշակ Զօպանեան այսօր Ֆրանսական դատարանի առջեւ գատ բացած է, հատուցում պահանջելու համար իր պատիւին եղած անարգանքներու դէմ : Մե՛ղբ որ դատարան մը չկայ ուր Պ. Արշակ Զօպանեան դատի քաշէ . . . Պ. Արշակ Զօպանեանը ինքն իսկ, ինքզինքին դէմ ըրած անարգանքներուն համար : Այդ դատարանին մէջ, ապահովաբար, իր դատը պիտի չչահէր :

Միւս կողմէ, ի՛նչ անլուր ժպրհութիւն մըն է՝ Ֆրանսական դատարանին գիմելու այս ձախողը ու յնասակար մտածումը : Հատուցում իրեն եղած անարգանքներու դէմ : Բայց Պ. Արշակ Զօպանեան անա երկու տարի է որ ուրիշ բան ըրած չունի բայց հիթէ աս ու ան անարգել, նախատել, անուանարկել : Իր գրական ամբողջ ճիգը այսօր ուրիշ բանի չի ձգտիր բայց եթէ նորանոր հայհոյութիւններ դարձնելու : Այդ երբեմնի բանաստեղծը ա՛լ հագուագիւտ որակականը կամ ինքնատիպ փոխաբերութիւնը փնտռելու բարձր տենչովը չէ որ կը լլկի, հապա է՛ն աղտոտ յիշոցը եւ է՛ն վարնոց լուտանքը : Իր ո՛չ մէկ քերթուածին դո՛ւրսակուտիւնէն սիրտը այնքան խայտանքով չճխաց անշուշտ որքան այն օրը երբոր անարգ գիւտն ըրաւ « մարդկային կղկղանք » անուանելու հայ գրագէտ մը որ ոճիւրը գործած էր Պ. Զօպանեանի գրականութեան չհաւնելու :

Բուս՛հ :

Ի ՅԱՂԹԱՆԱ՛Կ.

Հոռո՛ր Հա Թրխպուճն օրաթերթը հրատարակեց հետեւեալ շնորհաւորական նամակը, որ ուղղուած է անթիւ հեռագրին հասրիչ Պ. Մարքոսիի .

ԲԱՐԻՉ, 25 Նոյեմբեր 1901.

Պարոն՝,

Կը շնորհաւորեմ ձեզի : Հայաստանի փրկութեան գործիս կը սատարէք : Կարիպալտի Կալուրին աջակցեցաւ , դուք Ինծի պիտի ծառայէք : Ձեր փառքը մեծագոյն է :

Հայաստան արիւնով պիտի փրկուի . ժողովուրդս պատրաստ է իր արիւնը թափել իր ազատութեանը համար : Ձի թափեր սակայն . « Տեսնել Նաբոլին ու ապա մեռնիլ » կը ցանկայ Իտալացին . « լսել Չօպանեանին ծափերն ու ապա մեռնիլ » կ'ըզձայ Հայը :

Հայաստան կարօտագին կ'ականջէ ի դուք : Ձի լսեր : Ինձ զճ ժողովուրդս : Արարատ Բարիզէն հեռու է : Սուլթանը արգիլեց թէլէֆօնին հաստատութիւնը : Դաւ մը : Յաղթեցինք : Ծափերուս ձայնին ալիքները ա՛լ ծովուն ալիքներուն վրայէն ազատօրէն պիտի սուրան : Բանաստեղծ՝ հառաչներս ամպերուն . աշխարհավար՝ ծափերս ալիքներուն :

Բայց, Պարոն, իմ պատերազմի դաշտերս ծովեզերքներէն հեռու են : Կը յանձնարարեմ ձեզի փութով կատարելագործել ձեր գիւտը : Ծովուն կոհակներէն յետոյ ցամաքին կոհակներուն վրայէն պէտք է սուրայ անթել հեռագիրնիս : Երոխտաշատաչ ծափերս պէտք է հասնին մինչեւ Արարատ :

Այդ օրը ձեր երկու ձեռքը պիտի սեղմեմ : Առ այժմ մէկ ձեռքերնուդ սեղմումս բաւական համարեցէք :

ՉՊԱՆԵԱՆ

Այս շնորհաւորական նամակը հրատարակուելէն յետոյ հայ Յեղափոխութիւնը որոշեց մարտնչութիւնի դաշտը առժամաբար ծովեզերք փոխադրել , առ ի դիւրութիւն ծափերու ժամանումին :

Ծափերու ուղեւորութիւնը պիտի կատարուի հետեւեալ ճանապարհով :

Բարիզէն Պ. Չօպանեան իր ծափերը պիտի յանձնէ — ապահովագրեալ — Սէնի զբօսանքներուն — ինչպէս սովոր են ըսել բանաստեղծները

Ի ծաղկածին ջուրց ըզբօսանս :

Այդ զբօսանքները ծափերը պիտի առնեն ու անթել հեռագրով պիտի տանին մինչև Միջերկրական , ուրկէ պիտի փոխադրուին — յիս Տարտանել — Վոսփորէն մինչև Սեւ ծով :

Հետեւանքները զիւրին է գուշակել : Ծափաձայն առաջին շոխոզին պիտի պատասխանէ հրացանի պայթումը : Թշնամին սարսափահար կը փախչի զինաթող : «Ո՛վ կարէ կալ առաջի երեսաց քոց , ո՛վ Տէր Զօպանեան :» Հայաստան կը փրկուի :

Թելադրանք մը մ'ը կողմէն :

Մեզի կը թուի թէ յեղափոխական դաշտէն մինչև Սեւ ծով փոխադրութիւնը կը նմանի — ներքեցէ՛ք սըրբապիղծ բաղդատութեան — եզը մաւսանձարան հանելու գէպքին : Կարելի չէ՞ Պ. Զօպանեանի ծափերը նոյնութեամբ Արարատի ստորոտը փոխադրել : Էտիսըն ֆօնօկրաֆը ինչո՞ւ հնարեց :

Միանանք . ազգային հանգանակութեամբ մեծաքանակ ֆօնօկրաֆ գնեմք Պ. Զօպանեան քանի մը շարաթ առտուքնէ մինչև իրիկուն թող ծափէ : Ֆօնօկրաֆը անայլայլակ կ'արձանագրէ զանոնք : Այս ծափալիբ ձայնագիրները փոխադրուելով ուղղակի Հայաստան , կը բացուին հոն , ու իբր հայ Մարտիկը կ'ելեկտրացնեն հայ ժողովուրդը :

Փոխադրութիւնը հեշտ է : Պ. Զօպանեանի կողմէն երկու խօսք իր բարեկամին — կը գուշակէք, Տէլքասէին — եւ ֆրանսական նաւատորմը անգամ մը եւս Պ. Զօպանեանի տրամադրութեան ներքեւ կը դրուի : Ծովեզերքէն ֆրանսական ու ռուսական հրեպատոսները իրենց պարտականութիւնը պիտի համարին թանկագին տուփերուն անվտանգ փոխադրութիւնը մինչև կռուի դաշտերը :

Գաղափար մը երբեմն ամբողջ յաղթանակ մը կ'արժէ : Կը յուսանք մենք ալ մեր այս առաջարկովը աջակցած ըլլալ Հայաստանի փրկութեան մեծ գործին որ այսօր Պ. Զօպանեանի ձեռքին մէջ է :

Այս տողերը գրուած էին երբ Բարիկի Աէրօ-ֆլիւպի վերջին թիւը ստացանք , որուն մէջ կը գտնենք Պ. Զօպանեանի մէկ նամակը, ուղղուած Պ. Սանթօս-Տիւմոնի.

Բարիզ, 29 Նոյեմբեր 1901.

Պարոն ,

Կը շնորհաւորեմ ձեզի :

Ուշադիր հետեւեցայ ձեր օգնաւորդի փորձերուն : Տէօջ մրցանակին արժանաւոր էիք : Փառաւորագոյն մրցանակ մը վերապահուած է ձեզի :

Պարոն, վերջին պահուն որոշեցի իմ զինուորներու մարտնչումին անձամբ հսկել Հայաստան: Կը յանձնարարեմ ձեզ փութով պատրաստել աւելի մեծ օգնաւ մը : Ֆրանսայի Արտաքին Գործերու նախարար մը, հանգուցեալ Պարթէլըմի Սէնթ-Իլէր, Երեսփոխանական ժողովին մէջ օր մը յայտարարեց թէ « Ֆրանսական նաւատորմը չենք կրնար մինչև Արարատի ստորոտը փոխադրել , ի՞նչպէս ուրեմն օգնենք Հայոց :» Հիմակ, Պարոն, օգնաւերը կրնանք հասցնել մինչև Արարատի բարձունքը : Յաղթանակս ապահովեալ է : Կը սպասեմ :

ԶՕՊԱՆԵԱՆ

Մենք ալ ապահովեալ կը նկատենք : Դար մը առաջ Պոնաբարդ Եգիպտոս իր զօրքը ելեկարացուց գոչելով անոնց. « Զօրականք, այս բուրդերուն բարձունքէն քանոստուն դարեր ձեզ կը նային : » Մամուլնէնը ջարդուփշուր եղան : Հայաստան , երբ Վարդ-Պատրիկով իր զօրքերուն գոռայ « Ֆէտայիներ, այս երկնքին բարձունքէն Զօպանեան ձեզ կը դիտէ », ո՞վ կը տարակուսի թէ Համիտիէները ջարդուփշուր պիտի չըլլան :

Օ՛ն , ի յաղթանակ :

ԴԱՏ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

« Դատողը պիտի դատուի » ըսաւ Յիսուս. բայց չըսաւ թէ դատ բացողը ի՞նչ պիտի ըլլայ : « Դատ բացողն ալ պիտի դատապարտուի », պատասխանէ գուցէ Պ. Միհրան Գալփաքճեան որ իր ողջ գլուխը Աւետարանին տակ դրած է ժամանակէ մը ի վեր, մաքրելու համար Բարիզի ազգային գործիչներու հրապարակը, որ, ըստ իր համոզման , Աւգիասի ախոռին չափ պէտք ունի խոշոր աւելի մը :

Այդ հերակլեան աշխատանքը իրեն արժեք արդէն

դատ մը գոր Պ. Ա. Զօպանեան բացած է իրեն դէմ եւ գոր մենք էինք « առաջին անգամ » ծանուցանողը :

Հիմակ, « առաջին անգամ » ըլլալով, մենք ենք զար-  
ձեալ որ կը ծանուցանենք թէ Պ. Յ. Իսկէնտէր եւս դատ  
բացած է Պ. Մ. Գալփաքճեանի դէմ :

Այս երկու դատերը աստուածաբանական խնդիր մը  
մէջտեղ նետած են սակայն : Պ. Գայանեան կը պնդէ որ  
ինքն ալ պէտք է դատի ենթարկուի քանի որ Մ. Գալ-  
փաքճեանի հետ թէեւ երկու անձ՝ սակայն մի բնու-  
թիւն կը կազմէ. իսկ դատախազները, տեսակ մը եւտի-  
քականներ, կը պնդեն որ Պ. Գայանեան Հոգին Սուրբն  
է միայն, անփոփոխ, անայլայլելի եւ անմիակից ընդ  
Որդւոյ. եւ որովհետեւ իրենց սխալ Որդւոյն դէմ է, չեն  
ուզեր Սուրբ Հոգիին հետ ալ գործ ունենալ :

« Միխթարիչ »ը անմիխթար է իրեն եղած այս զըր-  
կանքին համար :

Քանի որ խօսքերնիս դատի ու կրօնքի վրայ է, չմոռ-  
նանք յիշելու որ Ս. Կողմայի եւ Ս. Դամիանոսի (որոնց  
յիշատակն օրհնութեամբ եղիցի) պաշտօնակիցներէն  
Տոքթ. Ռոպէնսոն եւս կամէութիւն, կամ գիտաւորու-  
թիւն, կամ փափաք, կամ յաւակնութիւն ունեցեր է  
Ազատ Խօսքի եթէ ոչ խմբագրութեան գոնէ տպագրիչին  
դէմ դատ բանալու : Անարժաթ բժշկաց ընկերը, որոնց  
տօնը Հայաստանեայց եկեղեցին կը կատարէ Մարերի  
ԺԲ.ին, ինքն ալ իր դատով աստուածաբանական ծան-  
րակշիռ խնդիր մը յարուցանելու երկիւղը կուտայ տպ-  
գրիչը գոյափոխելով պատասխանատու խմբագրի :

Մենք, Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հա-  
ւատարիմ զաւակներ, կը հաւատանք որ Ս. Հաղորդու-  
թիւնը Յիսուս Քրիստոսի անարատ մարմնոյն կը փոխուի,  
սակայն դժուար կուզայ մեզի հաւատալ որ Ազատ Խօսքի  
խմբագրութեան պատասխանատուութիւնը զբաշարին  
կամ տպագրիչին կարելի է փոխանցել :

Չենք գիտեր թէ ի՞նչ վճռած է այս մասին Տրիտէն-  
տական ժողովը, բայց խաղաղ հոգիով կը սպասենք  
Police correctionnelleի աստուածաբան դատաւորներուն  
վճռին :

ԳԵՂԵՃԿԱԳՈՅՆ ԼՈՒՐ ՄԸ.

Ազատ Խօսքի նախորդ թիւին մէջ, « Գեղեցիկ Լուր

մը » տնտղոսին տակ , ծանուցած էինք այնքա՛ն Մանչէսթըրացիական որքան մեծահարուստ Պ. Մարտիրոս Թօփթեանի 20,000 անգլ. ոսկի նուիրելը Եւրոպայի մէջ Հայ կրթարան մը հաստատելու համար: Լուրը, որ առաջին անգամ մենք տուինք հայ մամուլին մէջ, անակընկալ մը եղաւ, — պէ՛տք է աւելցնել՝ հաճելի անակընկալ մը, — մանաւանդ անոնց համար որոնք թէ՛ տեղի հետադարձութեան , թէ՛ Մանչէսթըր երթալու առիթ չունենալով եւ թէ՛ զանազան արգելիչ անպատեհութիւններու պատճառաւ բախտ չեն ունեցած մօտէն ճանչնալու մեծասիրտ հայ բարերարը, որովհետեւ , կը շեշտենք այս կէտը , ամէն անոնք որ թէ՛ իրենց գործերով , թէ՛ Մանչէսթըր երթալով եւ թէ՛ զանազան պատեհ առիթներով մօտէն ճանչցած են մեծասիրտ հայ բարերարը , այդ լուրին առջեւ ոչ թէ՛ չսահմուկեցան , այլ նոյն բոկ յուսախարութիւն մը զգացին , յուսախարութիւն՝ որ արդիւնք էր մեծասիրտ հայ բարերարին վրայ իրենց ունեցած համարման քանակին՝ բարերարութեան անհամապատասխան ըլլալուն, կամ աւելի ուսմիկ կերպով բացատրելու համար մեր միտքը, շատ աւելի բան սպասելու իրաւունք ունենալ կը կարծեն եղեր իրմէ :

Խնդրին առած այս զանազան կերպարանքները մէկ կողմէն , հետաքրքիր , եւ հաւանականաբար անգործ , ընթերցողներէն մեզի ուղղուած հարցումները միւս կողմէն , պարտք կը դնեն մեր վրայ հրապարակաւ յայտնելու բոլոր այն լրացուցիչ տեղեկութիւնները որոնք հետզհետէ մեզի կը հասնին այս անդուզական գործին վրայ :

Նախ՝ կը յայտարարենք թէ լուրը ճիշդ է . 20,000 անգլ. ոսկի (\*) յատկացուած է հայ կրթարանի մը հաստատման համար :

Աս կ'ըսենք որպէս զի ՚պապանձին այն անգործ հետաքրքիրները որոնց վերը ակնարկեցինք եւ որոնք չէք իրենակայելք ի՛նչ կասկածախառն շեշտով մը համեմած (!!)

էին այն ուռուցիկ գովասանքները զորոնք՝ իբրեւ Հայ՝ ազգային պարտականութիւն կը զգան եղեր ընելու առ մեծասիրտ հայ բարերարն :

(\*) Աւելի ճշգրտապատում ըլլալու համար ըսենք որ գումարը 20,000 կիմէ է, 525,000 ֆրանք: (Ի. Ծ.)

Միւս կողմէ երջանիկ ենք որ առիթը ունինք աւել տելու Պ. Մարտիրոս Թօքաթեանի ծանօթներուն թէ յուսախաբ ըլլալու իրաւունք չունին, քանի որ հայ կրթարանի մը հաստատման համար 20,000 կիւնէ յատկացնելու մէջ կանգ չ'առնելու մեծասիրտ բարերարին գործը: Մեզ հասած ստոյգ տեղեկութիւններուն յենելով, — նոյն իսկ կ'օրհնելով, քանի որ տեղեկութիւնները շատ հաստատ են, — կը ծանուցանենք որ այդ գումարէն զատ նոյնչափ գումար մըն ալ Պ. Մարտիրոս Թօքաթեան նուիրած է իր կրթարանին ապագան ապահովելու համար: Երկրորդ 20,000 անգլ. ոսկին այժմէն իսկ յատկացուած է գնելու համար «Փղոսկրի շահագործման անգլիական անանուն ընկերութեան» բաժնեթղթերէն: (\*)

(\*) Այս անունն անգլիական ընկերութիւնը որուն կեդրոնատեղին է Լոնտոն (Lombard Street 83) վեց տարի է ի վեր կազմուած է եւ կը շահագործէ Վերին Բէնճապի մէջ գտնուած փղոսկրի հանքերը: «Հանք» բառը գուցէ տարօրինակ թուի բժախնդիք ընթերցողներու, որոնք, աւա՞ղ, մեր Թերթին շուրջն ալ չեն պակիր անշուշտ: Այդ անախորժ պարոններուն բերանը միանգամայն ընդ միշտ կարկելու համար, ըսենք անմիջապէս որ Լորտ Էլտըրտոն, մեծահարուստ Անգլիացին, 1889ին Հնդկաստան ըրած ուղևորութեան միջոցին գտած է այդ հանքերը որոնք ուրիշ բան չեն, այլ եթէ փիղերու հին գերեզմաննոցներ: Անոնք որ փոխանակ կարգ մը անբարոյական ու խենէշ վէպերու ընթերցումին մէջ իրենց այլասերած յուր բնագոյներուն յազուրիղ փնտռելու, աւելի ազնիւ հետաքրքրութիւններով տոգորուած, առի՞թ ունեցած են ուսումնասիրելու նիւսիսային Հնդկաստանի ցեղերուն նախապատմական շրջանի կեանքը, զիտեն անշուշտ թէ այդ նախնական ցեղերուն մէջ ո՞րչափ սուրբ համարուած էր փիղը եւ թէ ի՞նչ արարողութիւններով կը Թաղէին փիղերը յատուկ գերեզմաննոցներու մէջ: Լորտ Էլտըրտոն առաջինը եղաւ այդ հնադարեան գերեզմաննոցներէն մին գտնող, իսկ անկէ ի վեր, նորանոր պեղումներու շնորհիւ, ուրիշ գերեզմաննոցներ գտնուած են Ալլահապատ, Բահմուրադքա, Նաճակարա, Տէլհի, Սուճնաճալար և այլն և այլն, և այսօր «Փղոսկրի շահագործման անգլիական ընկերութեան» ձեռք կը գտնուին 16 ընդարձակ գետիններ որոնց կրնանք իրապէս «Փղոսկրի հանք» անունը տալ:

(Խ. Ծ.)

Այս թղթերուն շահաբաժինը , որ մօտաւորապէս տարեկան 1600 անգլ. ոսկիի պատկանելի (անշո՛ւշտ) գումարին պիտի հասնի , ամբողջովին պիտի յատկանայ հայ կրթարանին ընթացիկ ծախքերուն :

Բայց ա՛լ վերջացնենք այս յօդուածը որ չափազանց ջատագովական գոյն մը առաւ : (\*\*)

### ՄԱՆՉԷՍԴՐԻ ՏԵՐՊԱՊԱՆ.

Մանչէսթրի Հայերը անդադրում կը գանգատին իրենց հոգեւոր հովիւէն — ա՛հ սա բաներուն ինքնաբեր , բնազդական հեգնութիւնը — որմէ չեն կրնար կոր բաժնուիլ : Բան չմնաց գրեցին Քրիստոսի այդ փոխանորդին դէմ , Պոլսի թերթերը լեցուեցան վիպումովը անոր բմբիչի քաջագործութիւններուն : Նոյն իսկ տէրպապային դէմ գրել կարենալու համար գտնուեցան մարդիկ որ գրագէտ եղան . — որովհետեւ , ըսենք անցողակի , պիտի գայ օր մը , ու բարեշրջութեան օրէնքը կ'ամրացնէ իմ հաւատքս , պիտի գայ օր մը որ լրագրի մը մէջ ազդ զնորինքը անգամ գրագէտ պիտի կարծեն ինքզինքնին , ու . . . ՊիՏԻ ԳՆԱՀԱՏՈՒԻՆ այս ժողովուրդէն , որուն գրական բազմակողմանի հասկացողութիւնը մեր ցեղին ամէնէն անուշ ու երազել տուող բարեմասնութիւններէն մէկն է :

Բայց չսպասցնենք Տէրպապան :

Իմացանք որ նորին արժանապատուութիւնը ցուրտին , գիշերանց , եկեղեցիին դուռը ափ առնող անտուն փախըստական Հայի կոուփի եւ սրունքի անձնուէր հարուածներով դուրսը փողոցը նետելու սովորութիւնը ունի :

(\*\*) Վերջապէս պէտք չունինք խունկ ծխելու Պ. Մարտիրոս Թօքաթեանի բժին . իբրեւ հրապարակագիր , պարտք զգացինք գեղեցիկ գաղափարի մը այդ իրագործումը ծանուցանելու . այսչափ , եւ միայն այսչափ : Եթէ Պ. Մարտիրոս Թօքաթեան կը կարծէ Թէ տարին տասներկու ամիս մեր Թերթին էջերը իրմով պիտի լեցնենք , չարաչար կը սխալի : (Խ. Ծ.)

(Դիտել կուտանք նաև Պ. Թօքաթեանի որ Խ. Ծ. գիրերը «Խոտնարի ծառայ» չեն նշանակեր , այլ պարզապէս «Եմբարգրուծեան ժամօժուծիւն» է)

Իմացանք որ, տարամերժօրէն զբաղած իր տանը եւ պարտէզին խնամոտ հոգովը, երեսի վրայ կը թողու եկեղեցական իրերը, շապիկները աղտոտ ու պատուտած, ու կը ձգէ լոր, պատարագէն ետքը, ամբողջ օրը վառին հատին միշտ մամերը, լուսաւորելով զարմացած դէմքերը սուրբերուն որ իրենց շրջանակներուն մէջ բանտուած՝ զանոնք մարելու անկարող ճիգովը կը գալարուին : Իմացանք որ տէր հայրը գերազանց արուեստագէտ մըն է երեւակայական ամբաստանութիւններու ճիւղին մէջ, ու անպատկառ ու անբաղբատելի կոպիտ մը : Իմացանք որ լրբօրէն անհնազանդ գտնուած է շատ մը հոգաբարձութիւններու ու արհամարհոտ դիրք մը բռնած է նոյն իսկ իր մեծաւորին՝ Իւթիւճեան եպիսկոպոսին հանդէպ : Իմացանք ու աչքէ անցուցինք իր Հայ-եկեղեցի ըսուած թերթը որ լեցուած է ամօթալի ու խայտառակ ոտանաւորներով, ու Բրիտոսի թլփատութեան անդամազննական մանրամասնութիւններով :

Մանչէստրի Հայերը նողկանքով կը խօսին իրենց հովուին վրայ, ու Մանչէստրի Հայերը չեն կրնար բաժնուիլ իրենց նողկալի հովիւէն :

Մինչեւ ե՞րբ պիտի ձգենք որ կեղծիքը ու վատութիւնը, մեր ոսկորներուն մէջ անցած, պահին մեզ այս բարոյական փտութեան մէջ : Տիրացուներու լէգէնին մէջ մէկ հատ, մէկ հատ ՄԱՐԴի մը չի՞ գտնուիր կոր :

### ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ.

Նոր Կեանք (խօսքը Հայ ազգին ուղղելով). — Մենք միութեան անկեղծօրէն կողմնակից ենք. երկդիմութիւն չենք ուզեր, եւ միութեան սիրուն համար, կ'որոշենք ջնջել Հնչակեան անունը անգամ :

Իրօշակ (յանկարծակիի եկած). — Մե . . . մե . . . մենք ալ համահաւասար զոհողութիւն կ'ընենք : մենք ալ կը ջնջենք մեր Դաշնակցութիւն անունը :

Հայ ազգը. — Շիտակը, զոհողութիւնը երկու կողմէն ալ հաւասար է : Սիրտս շահելու համար, մէկը որքան կոտորեց, միւսն ալ՝ այնքան : Սիրտս որո՞ւն տամ :

Նոր կեանք (տեսնելով Հայ ազգին վարանումը). — Մենք նաեւ պատրաստ ենք մեր խմբագիրները ճամբել եւ թերթն ալ ի սպառ դադրեցնել :

Դրօսակ. — Մենք ալ , մենք ալ :

Հայ ազգը. — Տարակոյս չկայ որ երկուքն ալ հաւա-  
լասարապէս ցանկացող են միութեան : Ո՞ր կողմը հա-  
կիմ . . .

Նոր կեանք (դժկամակած՝ ազգին այս յարածուն վա-  
րանումէն). — Սակայն մենք ուրիշ բան մըն ալ պիտի  
ընենք . պիտի ճամբենք մեր վարիչները :

Դրօսակ. — Ճիշդ այդ բանը մենք ալ պիտի ընենք :

Հայ ազգը. — Ամենեւին շահախնդրութիւն չկայ :  
Հաւասարութիւնը կատարեալ է զոհողութեանց մէջ :  
Ի՞նչպէս մին նախամիծար համարիմ միւսէն :

Նոր կեանք (բարկացած). — Դեռ ի՞նչ կրնանք կոտ-  
րել . . . Այո՛ , խօսք կուտանք որ մեր հիմակուան վա-  
րիչները պիտի հետամուտ չըլլան նոր գործ մը , նոր  
պաշտօն մը , վերջապէս ամսական մը ձեռք անցընելու  
Միացեալին մէջ :

Դրօսակ. — Մենք ալ այդպէս պիտի վարուինք . եր-  
զում կ'ընենք . . . արեւմտեան բիւրօյին վրայ :

Հայ ազգը. — Ասկէ աւելի լաւ չի կրնար գործադրուիլ  
հաւասար զոհողութիւններու մէթոտը : Բայց ես ո՞ր  
կողմին բանամ . . . քսակս :

Նոր կեանք (Ալ բոլորովին զայրացած). — Ա՛լ զոհե-  
լու բան մնաց . . . Մենք , մեր մտքէն չանցած մեծ ու  
փոքր ամէն զոհողութիւններն ընելու պատրաստ ենք :  
Հրամայե՛ք , յայտնեցէք . . .

Դրօսակ. — Մենք ալ այդպէս պիտի ընենք , ձեզի  
պէս եւ հաւասարապէս . . .

Նոր կեանք. — Մենք Լոնտոնէն պիտի ելլենք . . .

Դրօսակ. — Մենք ալ ժընէվէն . . .

Նոր կեանք. — Մենք Հայաստանն ալ պիտի թո-  
ղունք . . .

Դրօսակ. — Մենք ալ . . . մենք ալ . . .

Հայ ազգը (Գրպանէն հանած քսակը նորէն գրպանը  
դնելով). — Կեցէք , կեցէք , ա՛լ հասկցայ : Աւելի առաջ  
մի՛ տանիք այդ զոհողութիւններու մրցումը : Գիտէ՛ք ,  
այս միջոցիս զուր ինծի ի՞նչ կը յիշեցնէք . — երկու դէմ  
դէմ խանութպաններ որ , առջեւնէն անցնող յաճա-

խորդները չփախցնելու համար, իրարմէ աւելի զեղջ կ'առաջարկեն : Երբոր այդպէս աւելի կտրէք, կտրէք, ջնջէք, զոհէք (ի՛նչ ալ աղուոր բառ՝ սա զոհել բառը), անդին ի՛նչ պիտի մնայ ձեզ որ մնացորդովը կարենաք միութեան շէնքը շինել : Գիչ մըն ալ սա կէտին վրայ խօսինք :

Պապանձումն Զաքարիայի :

### ԿԸ ՍՊԱՍՆԵՒԲ ՄԻՇՏ.

Կ'երեւայ որ Տոքթ. Ռոպէնսոն Նոյեմբեր 12ին Բարիզ, Պուլվառ Մոնբառնաս, թիւ 168 կը գտնուէր, որովհետեւ այդ թուականով եւ հասցէով մեր արտօնատիրոջ ուղղուած նամակ մը ստացանք իրմէ, անձոռնի ֆրանսերէնով մը գրուած : Դեռ ժամանակ չունեցանք քննելու այդ նամակին ուղղագրութեան եւ շարադրութեան ամբողջ սխալները, բայց ինչ որ վեր ի վերոյ կրցանք հասկնալ այդ charabiaէն սա է թէ Պ. Ռոպէնսոն հերքել ուզած էր Տէյլի Մէյլի Վիէննայի թղթակցին տեսակցութիւնը Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպան Պ. Գոնսթանի հետ : Ծանուցած էր նաեւ որ Տէյլի Մէյլ ֆրանսատեաց քաղաքականութեան մը կը հետեւի : Տէյլի Մէյլի մէկ սխալն ալ ի վեր հանած էր ըսելով որ անդլիական թերթը փոխանակ « Տոքթ. Ռոպէնսոն հայազգին » ըսելու, « Տոքթ. Ռոպէնսոն Ամերիկացին » գրած է : Պէտք է դիտել տանք սակայն քաջածանօթ (\*) բժշկին որ այդ սխալը արդէն Պ. Մ. Չերազ ուղղած էր իր թեր-

(\*) Մեր նախորդ Թիւին մէջն ալ « քաջածանօթ » մակդիրը տրւած էինք Տանիէլ տը Ժօէի դիւցազնին : Ուրբա՞մի բարեկամը որ անձարակուծիւնը ունեցած էր գրածնիս ֆրանսերէնի Թարգմանէլու, մեր արտօնատիրոջ ուղղած նամակին մէջ, քաջամտօքը, որ բառ առ բառ bien connu կը նշանակէ, célèbre Թարգմանած էր : Ուրիշ անգամ մըն ալ, Պոլսոյ մէջ, Տոքթ. Ռոպէնսոն police d'assurance « ապահովութեան ոստիկանութիւն » (!!!) Թարգմաներ է : Կարծենք Տէյլի Մէյլի դատարարը հինգ տարիէ ի վեր Բարիզ է : Չէ՞ր կրնար գոնէ քիչ մը ֆրանսերէն սորվիլ :

թին մէջ : Ասոնցմէ զատ տոբթորը կը գրէ նաեւ որ Ֆրանսաստեաց թերթին իր մասին գրածներն ալ սխալ են :

Կ'երեւայ որ Տոբթ. Ռոպէնսոն կը կարծէ թէ «Ազատ հօսք»ը Տեյլի Մեյլի բարիզեան ճիւղն է : Իր սխալը իրեն հասկցնելու համար կրնայինք իր սխալներով լեցուն նամակը վերագարծնել Պուլվատ Մոնթաոնաս թիւ 168, բայց նախընտրեցինք պահել այդ անձոռնի գրութիւնը որ կրնայ շատ օգտակար ըլլալ մեզի :

Մտահոգութիւն մը սակայն կը լլկէ մեզի : Եթէ Տոբթ. Ռոպէնսոն զեղազիրներն ալ նամակներուն պէս կը շարագրէ , վա՛յ ձեռքը իյնողին գլխուն :

Վերջին դիտողութիւն մը : Տեյլի Մեյլ իր Վիէննայի թղթակիցը պաշտօնանկ ըրաւ անմիջապէս երբ մէջտեղ ելաւ իր տուած լուրին սխալը : Արդեօք բարիզեան թըղթակիցն ալ պաշտօնանկ եղա՞ւ Տոբթ. Ռոպէնսոնի մասին տուած լուրին համար , որ շատ աւելի ծանր էր , քանի որ բարոյապէս սպաննել կը նկրտէր պարկեշտ համարուած անձ մը :

Մենք խորհուրդ կուտանք «քաջածանօթ»ին որ փոխանակ իր չգիտցած լեզուներովը նամակներ գրելու , անմիջապէս վատահամբաւութեան դատ բանայ Տեյլի Մեյլի դէմ , քանի որ այսքան վատահ է իր անբծութեան վրայ , եւ դատապարտել տայ զանի :

Մեր մեծագոյն փափաքն է , ինչպէս նախորդ թիւին մէջն ալ ըսինք , սրբուած տեսնել Հայ մը իր վրայ նետուած աղտոտութիւններէն :

Կը սպասենք :

---

### ՎԻԳԴՈՐ ՀԻԻԿՕ ԱՌ ՉՕՊԱՆԵԱՆ.

J'ai des rêves de guerre en mon âme inquiète,  
J'aurais été soldat si je n'étais poète.

(VICTOR HUGO, Odes et Ballades.)

Խըռով հոգւոյս մէջ ունիմ գոո երազներ մարտական ,  
Թէ բանաստեղծ չըլլայի՛ պիտ'ըլլայի զօրական :

ՇՈՒԱՐԱԾ ՃԱՇԱՐԱՆԱՊԵՏ ՄՐ.

Հայ ճաշարանապետ մը ի՞նչպէս կրնայ գոհացնել իր յաճախորդները: Այս անլուծելի հարցին առջև շուրած մնացեր է Պ. Կէորզ Սիմոնեան որ գաղափարը ունեցած է նոր ճաշարան մը հաստատելու Ռիւ Պիւֆօ թիւ 9:

Մտիկ ընենք զինքը :

— Եղբայր, (գիտա՛ծէ՞ք որ երբ մարդ մը փորձանքի մատնուի « եղբայր » կ'անուանակոչէ իր խօսակիցը ) կերակուրներուն մէջ զանազանութիւն չի կայ ըսին՝ զանազանութիւն դրի. քանակութիւնը քիչ է ըսին՝ քանակութիւնը շատցուցի , գիները սուղ է ըսին՝ աժանցուցի . սրահը բաւական լուսաւորուած չէ ըսին՝ էլէք-թրիքով լուսաւորեցի , գինին աղել չէ ըսին՝ փոխեցի , միսը աղել չէ ըսին՝ մասվաճառը փոխեցի , ռախին աղել է բայց մէզէ չունիս ըսին՝ մէզէ տուի . աղել ամա ռախի խմած ատեննիս Բարիգի հոգեւոր հովիւը կուգայ կոր վրան բաց խօսքեր չենք կրնար կոր ընել ըսին՝ հոգեւոր հովիւը անձուիրաբար հեռացաւ իր ոչխարներէն , այսուհանդերձ գարձեալ դիտողութիւններէն չազատեցայ :

— Հիմակ ի՞նչ կ'ըսեն կոր .

— Հիմակ ալ կ'ըսեն կոր թէ՛ «Աս ի՞նչ տեսակ մարդ ես, մինչեւ ետքը մեր խօսքովը պիտի կառավարես ճաշարանդ , մենք գործի տէր մարդիկ ենք , չենք կրնար ամէն իրիկուն հոս գալ ու քու ճաշարանիդ վրայ դիտողութիւն ընելով անցունել : »

— Դիտողութիւն մըն ալ կը ներե՞ս որ ես ընեմ :

— Դո՞ւն ալ . . . բայց ես քենէ՛ դիտողութիւններու բարձումին համար խրատ մը կը սպասէի :

— Իմ դիտողութիւնս այն է որ բնաւ ականջ պէտք չէ կախես ամենուն դիտողութեանը, կամ դիտողութիւն ընող յաճախորդներէն իբրեւ տուգանք որոշեալ գումար մը պահանջելու ես : Այն ատեն դուն ալ կը հանգստանաս , յաճախորդներդ ալ :

🕒 Զինք գիտեր որ Պ. Սիմոնեան պիտի հետեւի՞ մեր խրատին , բայց ամէն պարագային օձիքնիս ազատելու համար ուրիշ բան չգտանք իրեն ըսելիք :

ՅԵՏԱԶԳՄԱՆ ՊԱՏՃԱՌ.

— Բան մը միայն , սիրելիս , կը խնդրեմ քենէ , կը մրմնջէր օրիորդը :

— Ի՞նչ է, անուշա, կը հարցնէր նշանածը :

— Ամիս մըն ալ դեռ թող գաղտնի մնայ մեր խօսք-  
կապը :

— Ինչո՞ւ . ընդհակառակը, թող որ աշխարհիս ըսեմ  
թէ դուն իմս ես, թող որ ցոյց տամ տարած յաղթու-  
թիւնս :

— Ամիս մըն ալ, սիրելիս, պզտիկ ամիս մըն է  
խնդրածս :

— Բայց վերջապէս ինչո՞ւ ամիս մըն ալ գաղտնի  
պահել ու ճրագը գրուանին տակ դնել կ'ուզես . . .  
վախնամ ա՛լ զիս չես սիրեր կոր :

— Սիրե՛լ մի, կը պաշտեմ քեզի : Դուն ես միակ  
մարդը զոր երբեք սիրած ըլլամ : Բայց դուն փարայ  
չունիս . . . եւ . . . եւ . . .

— Բայց ես պիտի հարստանամ : Քեզի հետ, սէրս,  
պիտի աշխատիմ հարստանալու համար :

— Այո՛, սիրելիս, այո՛. բայց միւսիւ Երուանդը  
չատ հարուստ է, միւսիւ Տիգրանը չատ լաւ դիրք ունի,  
միւսիւ Քրիզոբիկն ալ առատութեան մէջ կը լողայ, եւ  
զիս պաշտողներուն մեծ մասը դրամի տէր են :

— Դեռ խելքդ միաքոք քեզ պաշտողներուն է :

— Այո՛, սիրելիս, եւ որովհետեւ անունիս օրը մօտ  
է՝ ատուք բոլորն ալ ինծի աղուոր աղուոր ընծաներ  
տուած են այդ օրը ամէն տարի . . .

— Ո՛հ, հասկցայ, խելացի հրեշտակս, սպասենք  
հապա, սպասենք ամիս մըն ալ :

### ԱՆԿԵՂԾ ԾԵՈՐ ՀԱԿԱԼԻՔ.

Նուիրական պարտք մը կը զգանք հրապարակաւ  
չնորհակալ ըլլալու Պ. Մինաս Չերազի, որ հակառակ  
իրեն նկատմամբ մեր բռնած դիրքին, «Ազատ Խօսք»ի  
համար մեծազղորդ ուժըլամ մը ըրած էր իր թերթին  
Նոյեմբերի թիւին մէջ, ծանուցանելով որ մեր թերթը  
կը խմբագրուի՝ բացի Ե. Օտեանէն՝ Լ. Բաշալեանի եւ  
Ա. Արփիարեանի կողմէն : Մենք առաջին թիւէն իսկ  
փութացած էինք զգացնել Ե. Օտեանի մասնակցութիւնը  
«Ազատ Խօսք»ին, եւ մեր ընթերցողներուն ուշիմութեան  
ձգած էինք գուշակել միւս աշխատակիցները. Պ. Մինաս

Չերազ քօղը վեր կ'աննէ , այս կերպով ցոյց տալով թէ ինք հասկցած է մեր Բօլիշիներէի գաղտնիքը : Բօլիշիներէի գաղտնիք արդարեւ, ջանի որ յօղուածները իրենց մէջ կը ցուցնէին այն երկու ինքնատիպ եւ աննմանելի գրագէտներուն անունները որոնց հմայքը արդէն ամէն ընթերցող զգացած էր, բացի, աւա՛ղ, ՆԱՌՆԵՆԻԻ ԲԹԱՄԷՅԱՆ ընթերցողէն որ պէտք ունեցեր է «Մեր Տնօրէն»ին դիմելու «Ազատ Դօսք»ի խմբագիրները ճանչնալու համար :

Որպէ՛ս չէր Պ. Մինաս Չերազ եւ իր Բէովտացին բուրովին ուրախ եւ անգորը ըլլան , պարտք կը զգանք ծանուցանելու թէ՛ բացի այդ երկու գրական ականաւոր անձնաւորութիւններէն՝ ուրիշ ոչ ուուազ ծանօթ գրագէտներ կը մասնակցին մեր թերթին , բացի Զաքարիա Մարգար Յոշկնց Երեւանցիէն եւ Լոյսակէն որոնք, ինչպէս յայտնի է , միայն եւ միակ աշխատակիցներն են Անահիթի :

«ԱԶԱՏ ԴՅՈՒՎ»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Ազատ Դօսքը պարբերական հրատարակութիւն մը պիտի ըլլայ սարին առ հունուան 12 թիւով, բայց հաւանական է որ այդ թիւին մէջ չսահմանափակուի մեր հրատարակութիւնը, հետեւաբար որոշած ենք բաժանորդագրութիւնը թիւի վրայ ընել :

12 թիւի բաժնեգինն է Եւրոպայի եւ Ռուսիայի համար 5 ֆր. իսկ Ամերիկայի համար 8 սոյս : Բաժնեգինը կանխիկ է :

Ազատ Դօսքի մէկ թիւին գինն է 50 սանթիմ :

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ.

« Ազատ Դօսք », ի վերաբերեալ ամէն գրութիւն, թերթ եւ բաժնեգին ուղղել մեր հետեւեալ նոր հասցէին .

M. D. DIKRAN (Pour AZAD KHOSK)  
15, Boulevard Arago, (XIII<sup>me</sup>)

Le Gérant : R. CHOTARD.

Imp. D. DIKRAN. — 15, Boulevard Arago, PARIS.